ՎԵՍՊԵՐ



# ԹԵԼԻԿՆ ՈՒ ՄԵԼԻԿԸ

ՊԵՏՀՐԱՏ

891.995
Վ-47

Վ Ե Ս Պ Ե Ր

2011-07

# ԹԵԼԻԿՆ ՈՒ ՄԵԼԻԿԸ

Նկարները
ԶԱԶԻԿ ԱՂԹՈՒՆՅԱՆԻ

Պ Ե Տ Հ Ր Ա Տ
ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
Յ Ե Ր Ե Վ Ա Ն 1938

0 9 AUG 2013
13139
ՊԵՏ ԿՈՆ ԳՐ. ԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՌ–Арм.ССР
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
им. А. Мясникяна
60054-66



1.

Գարունն յեկավ՝ մանուշակով,
Մանուշակով, մեր աշխարհով,
Գըլգլալեն առուն հոսեց,
Սար ու քարին համբույր տվեց։
Յեվ բոլորի գլխի վրա՝
Փռեց արփին վոսկե վրան։

2.

Յերկու սիրուն քույր ճնճղուկներ,
Զուննենալով հատիկ ու կեր,
Նայում եյին իրենց ճանաչ
Մանուկներին, մարգին կանաչ,
Նայում եյին խեղճ ու կրակ,

Ու միտք անում յերկար-բարակ։
— Շա՜տ եմ քաղցած, Թելի՛կ քույրիկ
Վոչ վորդ ունենք, վոչ ել հատիկ,—
Ասաց Մելիկը հուսահատ,
Յեվ արտասուք թափեց առատ։
— Լաց մի՛ լինի,—Թելիկն ասաց,—
Չե՛, չենք մնա անվերջ սոված,
Թե վոր գնանք ու վորոնենք՝
Հատիկ ու կեր մենք կգտնենք։
— Յես չեմ կարող քեզ հետ թռչել,
Արևի տակ յերկար շրջել,—
Պատասխանեց Մելիկը ծույլ
Ու կծկվեց խեղճ ու տխուր։
Թեև քաղցած, թռավ-գնաց
Թելիկն աշխուժ ու թեվաբաց.
Թռավ՝ հույսը միշտ սրտում վառ,
Ու կեր փնտրեց նա անդադար։

3.

Հանկարծ նրա դեմը բացվեց
Պտուղներով լիքը պարտեզ.
Կախվել եյին ճյուղերից ցած՝
Թշիկներով վառ, կարմրած՝
Կլոր-կլոր բալ ու կեռաս,
Թութը անուշ ու նորահաս։





Կերավ, կերավ ու կշտացավ,
Տանջող քաղցը նա մոռացավ։
Չմոռացավ բայց Մելիկին,
Աչքը ճամբին եր քույրիկին։
Կոթից կախած բալ ու կեռաս,
Թութը անուշ ու նորահաս՝
Վերադարձավ նա քրոջ մոտ,
Սրտով կարոտ...
Ուրախացավ Մելիկը շատ,
Ու դադարեց արցունքն առատ,
Յեվ փայլ առան ու փայլ տվին
Նրա աչքերն ասես կրկին։

Կերա՜վ, կերա՜վ ու կշտացավ,
Տանջող քաղցը նա մոռացավ։
Դարձավ ուրախ ու ճըլվլուն,
Գըլգըլացող, ինչպես առուն։
Պատմեց Թելիկն այն պարտեզի
Պտուղների, ծաղկի մասին,
Ծըլթըլթալով ու լավ պատմեց,
Մինչև Մելիկն անուշ քնեց։

4.

Առավոտը, երբ լուսացավ՝
Թելիկն ասաց գվարթաձայն.
— Թե՛վ առ, գնա՛նք, քո՛ւյր իմ Մելիկ,
Պտուղներով պարտեզն այն լիք,
Վոր չմնանք դարձյալ սոված,
Ցերեկվա պես հուսահատված։
Ով վոր կյանքում չի ծուլանա,
Յեվ կաշխատի՝
Նա՛ ել կուտի...

Պատ. խմբագիր՝ Հ. Հայրապետյան
Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան
Սրբագրիչ՝ Հ. Մանուկյան

Գլավլիտի լիազոր՝ Ղ—3642. Հրատ. № 4586.
Պատվեր 377. Տիրաժ 4000
Հանձնված է արտադրության 3 փետրվարի 1938 թ.
Ստորագրված է տպագրության 16 հունիսի 1938 թ.

Պետհրատի I տպարան, Յերևան. Լենինի 65

ГОС. БИБЛИОТЕКА
ՀՍՍՀ-Арм ССР
ИМ. А. МЯСНИКЯНА

ՀՀ Ազգային գրադարան
NL0402689

ԳԻՆԸ 40 Կ.

602

13139

И-39
3009



ВЕСПЕР

ТЕЛИК И МЕЛИК

ГИЗ АРМ. ССР, ЕРЕВА

891.99Մ
Վ-47